ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«08» հոկտեմբերի 2021 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատարի փոխարինող Ս.Վարդևանյանը:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է համայնքի ղեկավարին փոխարինող Ռ.Սանոյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 21 (քսանմեկ) անդամներ՝

Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Վ.Եդիգարյանը, Ա.Գրիգորյանը, Գ.Սարգսյանը, Վ.Հունանյանը, Գ.Գրիգորյանը, Գ.Սարգսյան, Ս.Աստոյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Սարգսյանը, Ս.Մարտիրոսյանը, Հ.Եղիազարյան, Լ.Բարսեղյանը, Ա.Վարդանյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ-ի փոխարինող Ս.Վարդևանյանը:

ԼՍԵՑԻՆ.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 17

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու տասնմեկերորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ԴԱՇԻՆՔ՝ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԱՉ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՆԵՐԴՐՄԱՆ-ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 15

դեմ – 0

ձեռնպահ –2 (Հ.Եղիազարյան, Ս.Մարտիրոսյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. «ԴԱՇԻՆՔ՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրով նախատեսված բաղադրիչների իրականացման համար հատկացնել 28 056 600 (քսանութ միլիոն հիսունվեց հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա- տնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021թվականի բյուջեի 1/6/1 գործառական դասակարգման (4412) «Ներքին վարկերի տոկոսավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 5(ՀԻՆԳ) ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 21

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Կազմակերպություններին շենքի ընթացիք վերանորոգման, գույքի և վառելափայտի ձեռքբերման համար, որպես նվիրատվություն Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից հատկացնել 4 136 900 (չորս միլիոն մեկ հարյուր երեսունվեց հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել համապատասխան գործառական դասակարգուների տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ համաձայն հավելվածի՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 21

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թիվ 3 գերեզմանատանը բարեկարգման աշխատանքներ իրականացնելու նպատակով հատկացնել 12 000 000 (տասներկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտե-սագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 4/5/1 գործառական դասակարգման (4251) «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ««ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը, որպես նվիրատվություն հատկացնել 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2021-2022 թվականների ձմռան ընթացքում համայնքի թվով 400 (չորս հարյուր) կարիքավոր ծերերի ջեռուցման կարիքները հոգալու նպատակով:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագի-տական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՌԿԱ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Թույլատրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի հաշվեկշռում առկա լրիվ մաշված (օգտագործման համար ոչ պիտանի) գույքի դուրսգրումը՝ համաձայն հավելվածի:

2.Գույքի դուրսգրման գործընթացի կազմակերպումը և դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը վերապահել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտով ստեղծվելիք հանձնաժողովին:

3.Դուրս գրված գույքի կամ նրա առանձին հանգույցների, նյութերի, դետալների և մասերի օրենքով սահմանված կարգով հնարավոր վաճառքից ստացված միջոցների բաշխումը (ծախսման ուղղությունները) վերապահել համայնքի ղեկավարին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՌԿԱ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍ ԳՐՈՒՄԸ ԵՎ ՕՏԱՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 20
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Թույլատրել կազմակերպության գույքի դուրսգրումը և օտարումը՝ համաձայն հավելվածը:
2.Գույքի դուրսգրման և օտարման գործընթացի կազմակերպումը և դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը վերապահել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտով ստեղծվելիք հանձնաժողովին:

3.Դուրս գրված գույքի օրենքով սահմանված կարգով հնարավոր վաճառքից ստացված միջոցների բաշխումը (ծախսման ուղղությունները) վերապահել համայնքի ղեկավան:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրեն Հրաչ Հարությունյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 46(ՔԱՌԱՍՈՒՆՎԵՑ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ՍՈՒԼԹԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 20

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N-119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի պարտականությունների կատարող Ա.Գասպարյանի՝ համայնքի ղեկավարին ուղղված 2021 թվականի հոկտեմբերի 05-ի զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թվով 46 (քառասունվեց) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) տանիքների վրա ֆոտովոլտային կայաններ տեղադրելու համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների կատարման նպատակով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Թվով 46 (քառասունվեց) կազմակերպությունների ֆոտովոլտային կայանները տեղադրելու համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների կատարման նպատակով որպես նվիրատվություն 8/1/1, 8/2/2, 8/2/3 և 9/6/1 գործառական դասակարգումների (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից հատկացնել 20 000 000 (քսան միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեից օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 20

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների.

1) Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 413,58 (չորս հարյուր տասներեք ամբողջ հիսունութ հարյուրերորդական) հեկտար, որից վարելահող՝ 88,43 (ութսունութ ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) հեկտար, արոտ՝ 323,87 (երեք հարյուր քսաներեք ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) հեկտար,

2) Բնակավայրի հողեր 2732,97(երկու հազար յոթ հարյուր երեսուներկու ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական) հեկտար, որից տնամերձ՝ 367,64 (երեք հարյուր վաթսունյոթ ամբողջ վաթսունչորս

հարյուրերորդական) հեկտար, հասարակական՝ 145,93 (մեկ հարյուր քառասունհինգ ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) հեկտար, խառը կառուցապատման՝ 13,33 (տասներեք ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) հեկտար, ընդհանուր օգտագործման՝ 392,71 (երեք հարյուր իննսուներկու ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) հեկտար, այլ հողեր՝ 1039.6 (մեկ հազար երեսունինը ամբողջ վեց տասնորդական) հեկտար,

3) Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր 367,45 (երեք հարյուր վաթսունյոթ ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) հեկտար,

4) Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր 423,12 (չորս հարյուր քսաներեք ամբողջ տասներկու հարյուրերորդական) հեկտար,

5) Հատուկ պահպանվող տարածքների հողեր 94,11 (իննսունչորս ամբողջ տասնմեկ հարյուրերորդական) հեկտար,

6) Հատուկ նշանակության հողեր 234,71 (երկու հարյուր երեսունչորս ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) հեկտար,

7) Անտառային հողեր 150,84 (մեկ հարյուր հիսուն ամբողջ ութանասունչորս հարյուրերորդական) հեկտար,

8) Ջրային հողեր 12,72 (տասներկու ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) հեկտար,

9) Քաղաքացիների սեփականության հողեր 437,14 (չորս հարյուր երեսունյոթ ամբողջ տասնչորս հարյուրերորդական) հեկտար,

10) Իրավաբանական անձանց հողեր 68,27 (վաթսունութ ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) հեկտար,

11) Համայնքային սեփականության հողեր 3226,4 (երեք հազար երկու հարյուր քսանվեց ամբողջ չորս հարյուրերորդական) հեկտար,

12) Պետական սեփականության հողեր 687,53 (վեց հարյուր ութսունյոթ ամբողջ հիսուներեք հարյուրերորդական) հեկտար,

13) Վարչատարածք՝ 4429,5 (չորս հազար չորս հարյուր քսանինն ամբողջ հինգ տասնորդական) հեկտար:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ N 21/15 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ 39.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 20

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Քաղաքացի Ռաֆայել Արմենի Թամիրյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի 1-ին նրբանցքի N 21/15 հասցեի ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 39.0 (երեսունինը) քառակուսի մետր մակերեսով հողամասը:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 410046 (չորս հարյուր տասը հազար քառասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռաֆայել Արմենի Թամիրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 41/14 ՀԱՍՑԵԻ 80.88 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 20
դեմ – 0
ձեռնպահ – 0
Լուսինե Սանոյանը չմասնակցեց 11-րդ հարցի քվեարկությանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Քաղաքացիներ Ռուբեն Ժորայի Սանոյանին և Զուբեյդա Միսակի Բալասանյանին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն, ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Գյումրի քաղաքի Չերազի փողոցի 1-ին նրբանցքի N 33/1 հասցեի 190.09 (մեկ հարյուր իննսուն ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի տանը հարակից, Հակոբյան փողոցի N 41/14 հասցեի Գյումրի համայնքին պատկանող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 80.88 (ութսուն ամբողջ ութսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ բնակելի տան ընդլայնման նպատակով, որպես բակ:

4. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 16177 (տասնվեց հազար մեկ հարյուր յոթանասունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1308396 (մեկ միլիոն երեք հարյուր ութ հազար երեք հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ռուբեն Ժորայի Սանոյանին և Զուբեյդա Միսակի Բալասանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇՉԵԴՐԻՆԻ ՓՈՂՈՑ N 18/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՎԵՐԵԼԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 2 (Լ.Բարսեղյան,Ա.Խաչատրյան**)**
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շչեդրինի փողոց N 18/4 հասցեում ինքնակամ կառուցված 14.1 (տասնչորս ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր արտաքին (10.5 (տասը ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով վերելակը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 14.1 (տասնչորս ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 10 (տասը) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը կառուցած քաղաքացի Արմեն Ռոբերտի Գրիգորյանին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված վերելակի և հողամասի վարձակալության վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 40000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արմեն Ռոբերտի Գրիգորյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 195-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17

դեմ – 0
ձեռնպահ – 1(Ա.Գրիգորյան)
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լոմոնոսովի փողոցի N 4/2 հասցեի 75.22 քառակուսի մետր մակերեսով Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը բնակելի տան ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 195-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ կետում.

ա) «1914 (մեկ հազար ինը հարյուր տասնչորս)» թիվը և բառերը փոխարինել «6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս)» թվով և բառերով,

բ) «143971 (մեկ հարյուր քառասուներեք հազար ինը հարյուր յոթանասունմեկ)» թիվը և բառերը փոխարինել «514053 (հինգ հարյուր տասնչորս հազար հիսուներեք)» թվով և բառերով,

գ) «մինչև 2021 թվականի հունվարի 01-ը» թվերը և բառերը փոխարինել «օտարման պահին» բառերով,

2) նախաբանից հանել ««անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով» թվերը և բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 20
դեմ – 0
ձեռնպահ – 1(Ա.Գրիգորյան)
ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24092021-08-0040), կառուցապատման նպատակով առանձնացված Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի N 4/43 հասցեի 726,32 (յոթ հարյուր քսանվեց ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0125-0152) սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով օտարել աճուրդով և սահման աճուրդի մեկնարկային գին՝ 2202000 (երկու միլիոն երկու հարյուր երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 64/1 ՀԱՍՑԵԻ 0.108381 ՀԵԿՏԱՐ ԵՎ 0.1810 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 20
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մովսես Խորենացու փողոց 64/1 հասցեի 08-001 և 08-001-117-008-002 կադաստրային ծածկագրերով համապատասխանաբար 0.108381 (զրո ամբողջ մեկ հարյուր ութ հազար երեք հարյուր ութսունմեկ) հեկտար և 0.1810 (զրո ամբողջ մեկ հարյուր ութսունմեկ հազարերորդական) հեկտար մակերեսներով

հողամասերի՝ բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակությունից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետին և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետին՝ օրենքով սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքի գլխավոր հատակագծում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 4 ՀԱՍՑԵԻ 0.3440 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 19

դեմ – 0

ձեռնպահ -0

Արմենուհի Վարդանյանը չմասնակցեց 16-րդ հարցի քվեարկությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղարիբջանյան խճուղի N 4 հասցեի 08-001-4-38 կադաստրային ծածկագրով (ճշտգրված կադաստրային ծածկագիր՝ 08-001-0261-0052) 0.344 (զրո ամբողջ երեք հարյուր քառասունչորս հազարերորդական) հեկտար մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունը՝ (բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության՝ արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողեր) համաձայն հավելվածի:

4. Հանձնարարել Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետին և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետին՝ օրենքով սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքի գլխավոր հատակագծում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. «ԱՌՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 20

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 15092021-08-0017) Մովսես Խորենացու փողոց N 46/6 հասցեի 283,83 (երկու հարյուր ութսուներեք ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բետոնյա հիմնասալիկը, և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության հողերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,032872 (զրո ամբողջ երեսուներկու հազար ութ հարյուր յոթանասուներկու միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը 5 (հինգ) տարի ժամկետով անհատույց տրամադրել «ԱՌՔ» բարեգործական հիմնադրամին՝ սոցիալական բազմաբնակարան շենք կառուցելու նպատակով:

2. Շենքի կառուցման և հողօգտագործման պայմաններն ու պահանջները մանրամասնել համայնքի ղեկավարի որոշմամբ:

Որոշումն ընդունվեց

ԳԵՎՈՐԳ ՌԱՖԻԿԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ն.ՍԱՐԳՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 20
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Գևորգ Ռաֆիկի Ալեքսանյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գևորգ Ռաֆիկի Ալեքսանյանին տատշաճ իրազեկման հաջորդող օրվանից:
Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Հ. Կարապետյան _____

Լ.Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ.Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Գ. Գրիգորյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Մխիթարյան _____

Ռ. Սարգսյան _____

Ս.Մարտիրոսյան _____

Հ.Եղիազարյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա.Վարդանյան _____

Ս. Գրիգորյան _____

Ա. Խաչատրյան _____

Գ.Մաթևոսյան _____

Հ.Պողոսյան _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՌՈՒԲԵՆ ՍԱՆՈՅԱՆ

ք. Գյումրի,
«08» հոկտեմբերի 2021 թվական